ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/229

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, 12.05.2022թ. թիվ 26/26-1/8650-2022 գրությամբ «Սպայդեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 05.05.2022թ. թիվ 1/18-4/31378-2022 գրության հիման վրա, 12.05.2022թ. թիվ 26/26-1/8650-2022 գրությամբ նախաձեռնել է «Սպայդեր» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սպայդեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սպայդեր» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Սպայդեր» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/229 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 12:00-ին և 13.06.2022թ. ժամը 10:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.05.2022թ. թիվ 1/18-4/31378-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՍՊԱՅԴԵՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև ՀՀ ՊԵԿ կարիքների համար շենքերի մաքրման ծառայությունների ձեռքբերման համար 2021 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված թիվ ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/35-1 ծածկագրով «Պետության կարիքների համար շենքերի մաքրման ծառայությունների մատուցման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) 1.1 կետով սահմանված կարգով՝ «ՍՊԱՅԴԵՐ» ՍՊԸ-ն պարտավոր էր կատարեր ստանձնած պարտավորությունները: Պատվիրատուի կողմից մատուցվող ծառայության ընթացքի և որակի ստուգման արդյունքում արձանագրվել են մի շարք խախտումներ (այդ թվում՝ մաքրություն իրականացնող աշխատակիցներին չեն տրամադրվել լվացող-մաքրող նյութեր, չեն տեղադրվել զուգարանների թղթեր, հեղուկ օճառներ, ինչպես նաև չեն հատուցել ծառայության մատուցման արդյունքում պատճառված վնասը՝ պատուհանների վրայի կոտրված 5 հովանոցները): Վերը նշված խախտումների շտկման համար մինչ օրս Ընկերությանը տրվել է ողջամիտ ժամկետ՝ 2 աշխատանքային օր, սակայն առկա խնդիրների շտկման ուղղությամբ որևէ աշխատանք չի իրականացվել:

Տեղեկացնում եմ, որ Կատարողի կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին և

խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայամանգրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2022 թվականի մայիսի 03-ից միակողմանի մասնակի լուծում է 2021 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/35-1 ծածկագրով պայմանագիրը չկատարված մասի չափով՝ 4 048 583 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «ՍՊԱՅԴԵՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/229 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 12:00-ին և 13.06.2022թ. ժամը 10:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/229 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/229 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Սպայդեր» ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/35-1» ծածկագրով պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ կատարողը ստանձնում է շենքերի մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը, համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ուղղված 05.05.2022թ. թիվ 1/18-4/31378-2022 գրությամբ մասնավորապես հայտնել է, որ «Սպայդեր» ՍՊԸ-ի կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայամանգրի 2.1.3

ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը:

3. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 03.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

4. ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի դրույթով, 05.05.2022թ. թիվ 1/18-4/31378-2022 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Սպայդեր» ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքված պայմանագիրը և Պայմանագրի լուծման վերաբերյալ Ընկերությանն ուղղված գրությունը:

5. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.05.2022թ. թիվ 26/26-1/8650-2022 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 05.05.2022թ. թիվ 1/18-4/31378-2022 գրությունը, գորով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Սպայդեր» ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/35-1» ծածկագրով պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ կատարողը ստանձնում է շենքերի մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը, համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ուղղված 05.05.2022թ. թիվ 1/18-4/31378-2022 գրությամբ մասնավորապես հայտնել է, որ «Սպայդեր» ՍՊԸ-ի կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայամանգրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի լուծել Պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում 03.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 05.05.2022թ. թիվ 1/18-4/31378-2022 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Սպայդեր» ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքված պայմանագիրը և Պայմանագրի լուծման վերաբերյալ Ընկերությանն ուղղված գրությունը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ **գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը,** որով կապացուցվեր Պայմանագրի շրջանակներում «Սպայդեր» ՍՊԸ-ի կողմից մատուցված ծառայությունը Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու փաստը, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի էական պայմանները, Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:

Մինչդեռ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով պետք է ներկայացներ Ընկերության տվյալները՝ **համապատասխան հիմքերով**: Տվյալ դեպքում՝ որպես հիմք հանդիսանում է Պայմանագրի շրջանակներում «Սպայդեր» ՍՊԸ-ի կողմից մատուցված ծառայությունը Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու փաստը, այսինքն՝ Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ չկատարելը հիմնավորող փաստաթղթերը, որի

արդյունքում խախտվել են Պայմանագրի էական պայմանները և հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Նշվածի արդյունքում արձանագրում եմ, որ սույն ընթացակարգի նախաձեռնման նպատակով Պատվիրատուի կողմից Պայմանագրի շրջանակներում «Սպայդեր» ՍՊԸ-ի կողմից մատուցված ծառայությունը Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու փաստը չներկայացնելու հետևանքով վիճելի է մնացել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները Ընկերության կողմից պատշաճ չկատարելու փաստը:

Վերոգրյալի արդյունքում գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի բացակայության պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Սպայդեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.05.2022թ. թիվ 26/26-1/8650-2022 գրությամբ «Սպայդեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**